ՆՈՐ-ԴԱՐ

№ 134 ՏԱՍՆԵՒՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ Շաբաթ, 25 Օգոստոսի 1901 Շաբաթ, 25 Օգոստոսի ՏԱՍՆԵՒՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 134

Տարեկան 10 ռուբլի, վեց ամիսը՝ 6 ռուբլի, երեք ամիսը 3 ր.50 կ., ամիսը՝ 1 ր., հատավ 5 կ.։
Բաժանորդ են գրւում Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ“
կամ Tiflis, Rédaction ,,Nor-Dar‘‘

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բառին 2 կ.,րեկլամների համար կրկնապատիկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.— Նպատակայարմար դիտողութիւններ։
Մխիթարեան Ուխտի ինչն են տօնում մերոնք։
Քրոնիկոն.—Լուրեր։
Մեզ գրում են.—Շուշուց։
Մխիթար աբբայ և իր գործը։
Մատենախօսութիւն։
Քաղաքական.—Թիւրքիա և Ֆրանսիա։ Հարաւային-Աֆրիկա։
Հեռագրական լուրեր։
Բանասիրական.—Վարդապետ։
Թեր և դէմ։
«Նոր Դար» ի պատասխանները։
Տեղեկատու։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 24 օգոստոսի 1901 թ.

ՆՊԱՏԱԿԱՅԱՐՄԱՐ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Մենք զբաղուած ենք, մեծ մասամբ, հոգեհանգիստներ եւ յոբելեաններ կատարելով. այդ է մեր հասարակական հոգեկան կեանքի բնորոշ երեւոյթը։

Մեզ փոյթ չէ, թէ ինչպէս եւ. ում շնորհիւ հազարաւոր անմեղ արարածներ մնացել են որբ,անտէր և անտիրական. մեզ փոյթ չէ, որ դրանք կորչում են,զոհ են գնում հաւատորսի հայրական խնամքին.—մենք զբաղուած ենք այդ խեղճերի համար նպաստներ հաւաքողների փառաբանութեամբ – հոգեհանգիստներով, և գոհ ենք։

Մեր էն շնորհալի, տաղանդաւոր դերասաններն և դերասանուհիները մեռել, անհետացել են. հասակաւորների կրթող հաստատութիւն, թատրոն չունինք. մեզ ինչ փոյթ որ չունինք.—մենք զբաղուած ենք անյայտ «արտիստների» յոբելեաններով, և բանի վրայ ենք։

Այժմս էլ կատարւում է Իտալիայի հիւսիսում մի կղզու վրայ գտնուող կրօնական մի միաբանութեան հաստատութեան երկուհարիւրամեակը։

Մխիթարեան միաբանները կարող են իրենց կրօնական-եկեղեցական հաստատութեան յոբելեանը կատարել. նրանք իրենց տեսակէտից և իրենց համար լաւ գործ են կատարում և այդպիսով կամենում են աւելի ույժ տալ Մխիթարեան Ուխտի ապագայ գործունէութեան և ձգտումների իրագործմանն ու տարածմանը։

Դա զովելի է, և ցանկալի էր, որ մեր հայոց միաբանութիւնները, մեր ս. էջմիածինն էլ կաթոլիկ-կղերական այդ միաբանութիւնից օրինակ առնէր եւ հետեւէր, թէ ինչպէս մի կրօնական միաբանութիւն աշխատում է իրագործել իւր նպատակը։

Բայց որ մի կրօնական կղերական հաստատութեան յոբելեանը համազգային գործ են ուզում դարձնել, – այդ մեզ համար հասկանալի է։

Այդտեղ էլ տեսնում ենք այն կեղծը (փալշը), որ ահա մի քառորդ դար է, որ վարակել է մեր հասարական - մտաւոր կեանքը։

Եթէ Մխիթարեանները տօնում լինէին իրենց գրական գործունէութեան այսքան ամեակը, մենք դրա դէմ ոչինչ չունէինք ասելու, թող դա լինի համազգային. մենք նրանց գրական գործունէութեան արժանաւոր և պակասաւոր կողմերը հրապարակ կըհանէինք եւ կըգըրւատէինք նրանց արժանաւոր գործերը։Բայց Մխիթարեանները տօնում են այսօր Մխիթարեան կրօնական-կղերական միաբանութեան երկու-հարիւրամեակը և ոչ թէ իրենց գրական գործունէութեան յոբելեանը։

Խառնել միմեանցից տարբերւող այդ երկու գործը, — դա եզուիտութիւն է, որ ձեռնտու է Մխիթարեան հայրերին, իսկ մեզ համար ձեռնտու չէ։ Աւելացնենք, եւ անմիտ բան է։

Որքա՜ն ողորմելի է մեր կեանքը և անբովանդակ. որքա՜ն աղքատ է մեր ինտելիգենցիան մըտքով ու հոգով, որ յանուն յառաջադիմութեան և մեծագոչ բառերով սնւելով՝ ուրիշ էլ բան չունի, կոչւումէ զբաղւելու.—մի ինչ որ կղերական-կրօնական պրոպագանդայի տօնախմբութեամբ։

Վա՜յ ողորմելի ազատամիտներ,որ փտած,լճացած կղերականների փէշերի տակ էք որոնում —լոյսը։

Այդ լոյսը մեռելների դիակներից բարձրացող (ֆոսֆորի) լոյսն է։

Դրանից է որ մեր ազատամիտներն և կղերականները թեւ թեւի տուած առաջնորդում են ժողովուրդը—գերեզմանատուն։

Քելեխ...

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԻ Ի՞ՆՉՆ ԵՆ ՏՕՆՈՒՄ ՄԵՐՈՆՔ

Վաղը, օգոստոսի 26 ին, Մխիթարեան գերապայծառ հայրերը տօնում են իրենց ուխտի գոյութեան 200-ամեակը։ Չգիտենք, կովկասաբնակ կաթոլիկ հայերը որեւէ բանով մասնակցում են արդեօք այդ յոբելեանին, բայց գիտենք և տեսնում ենք, որ մեր միջազգային տիրացուները, իրենց գլուխ ունենալով իրենց առաջնորդ Թերթը, որի հանգուցեալ չեֆը, Գրիգոր Արծրունին, Մխիթարեան կղերի ամենակատաղի թշնամիներից մէկն էր և տեղի-անտեղի յարձակումներ էր գործում հայր Ալիշանի կրօնակիցների նոյն իսկ գրական գործունէութեան վրայ,—այսօր գլուխները կորցրել են չափազանց ոգեւորութիւնից։ Վաղուայ տօնը նրանց համար Աստուած գիտէ թէ ազգային ինչ՝ մի երեւելի տօն է. Ներբողեաններ են գրում, յատուկ պատգամաւորներ են ուղարկում, իսկ շնորհաւորական հեռագրերը հօ—իրենց կարգին. բաւական է, որ մէկն օրինակ տայ։

Նշանակալից և, միեւնոյն ժամանակ, սրտաշարժ չէ արդեօք այն երեւոյթը, որ «կրօն չունեցող» (Արծրունու խօսքերն են) և առհասարակ ոչ մի դաւանութիւն չճանաչող հայ մամուլն այսօր ստրկական ժպիտով գլուխ է խոնարհում երեկուայ իւր քամահրած, ամեն տեսակ անվայել ածականներով կնքած մի զուտ կրօնական-կղերական միաբանութեան առաջ, որի համար հայոց աշխարհը, այդ աշխարհի նուիրական ձգտումները, ցաւերն ու կարիքներն աւելի նուազ նշանակութիւն են ունեցել և ունին, քան պապի մի մաշուած հողաթափը։

Ճիշտ է. իրենց այդ հսկայական հա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱՐԴԱՊԵՏ *)

Լեհաստանի հայերի պատմութիւնից,
դոկտոր Անտոնիոս I-ի

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Զգոյշ, հեռատես, աշխատասէր և հեզաբարոյ հայ ժողովուրդը ենթարկուած էր կրօնական «մոլորութիւնների»—աղանդապաշտ էր, ինչպէս այն ժամանակ էին ասում։ Այդ պատճառով հռովմէական կուրիայի նպատակն էր արմատախիլ անել հերձուածը և եկեղեցիների միութիւն գոյացնել։ Այնքան էլ դիւրին չէր իրագործել այդ, որովհետև դա հակասում էր գաղթական հայերին տրուած արտօնութիւններին, այսինքն չէր համապատասխանում այն ժամանակուայ լեհական հասարակութեան համոզմունքներին, կրօնական համբերողութեանը:

Լեհական հանրապետութիւնը խոստացել էր հայերին, որ կարող են ազատ դաւանել իրենց կրօնը. Նրանք եպիսկոպոս էին կամենում ունենալ. որովհետև Կիևի պատրիարքութիւնը կամ, ինչպէս ուրիշներն են անուանում, Կիևի արքեպիսկոպոսութիւնն այդ ժամանակ ընկել էր, այլ ևս գոյութիւն չունէր։ Մեծն Կազիմիր գիջանելով գաղթականների արդարացի պահանջներին, Իլվովն աթոռանիստ քաղաք նշանակեց հայերի թեմական առաջնորդների համար։ Թագաւորը չէր քննում այն հարցերը, թէ նոր թեմի սահմանները մինչև ուր էին տարածւում, թէ եպիսկոպոսն ունէ՞ր արդեօք օգնական, թէ արդեօք նրա իշխանութիւնը հաւասար էր լատինացոց եպիսկոպոսների իշխանութեանը,—այդ բոլոր հարցերի լուծումը թողնուած էր իրենց գաղթականներին: Գաղթականները հայ լուսաւորչական դաւանութեան էին պատկանում և բերել էին իրենց հետ աւանդութիւնով վաւերացած հրահանգներ։ Եպիսկոպոս ձեռնադրել կարող էր միայն Էջմիածնի կաթողիկոսը, իսկ քահանաները պսակւում էին, քահանաների ընտրութիւնը կախուած էր ծխականներից, և նրանք որոշ ռոճիկ չէին ստանում, այլ ապրում էին ժողովրդի տուրքով։ Եկեղեցիների մասին հոգատարութիւնը յանձնուած էր «հոգաբարձուների», որոնք ընտրւում էին արժանաւոր աշխարհականներից, և այս վերահսկողութիւնը, որ յաճախակի բռնակալական և ծանրաբեռնող էր լինում, այնքան խոր արմատ էր ձգել, որ միութիւնը կայացնելուց միայն 19 տարի անցնելուց յետոյ կարողացաւ արմատախիլ անել հ. Դէօդատ Ներսէսովիչը, Տրոյանապոլսի եպիսկոպոսը, Իլվովի կառավարիչը և այն էլ նա մեծ երկպառակութիւն ձգեց ժողովրդի մէջ: Կային և ուրիշ մեղանչութիւններ հռովմէական եկեղեցու դաւանանքների դէմ, որ մանրամասնօրէն պատմում է հ. Գալանոսը՝ Թէատինեանցների կարգից, որ միութեան ամենաեռանդուն քարոզիչներից մէկն էր:

Հասկանալի է ուրեմն, թէ որպիսի դժուարութիւնների պիտի հանդիպէին և յաղթէին լատինական եկեղեցու կուսակիցները կանխաւ որոշած նպատակին հասնելու համար։ Նրանց ջանքերը սկըսւում են դեռ Սիգիզմունդ III-ի թագաւորութեան ժամանակից, այսինքն այն ժամանակ, երբ մաքառում էին զանազան նորամուծութիւնների և հերձուածների դէմ: Ինքը թագաւորը շատ բարեպաշտ էր, և յիսուսեանները, որ նոր կանչուած էին Լեհաստան, յանձն առան հերձուածողներին հաւատափոխ անելու գործը։ Նրանց սուր հայեացքից հայերը չխուսափեցին. հարաւային սահմանում գործերը շատ բարեյաջող էին գնում, որովհետև Իլվովում հռովմէական հոգեւորականութեան ներկայացուցիչը Անդրէաս Պրուխնիցկին էր, որ ս. Լօյոլայի կարգի նշանաւոր ջատագովն էր, իսկ հայոց եկեղեցում Մեսրոպ եպիսկոպոսի մահից յետոյ թիւրիմացութիւններ սկսեցին տեղի ունենալ: Համանման գժտութիւններ, ճիշտ է, լինում էին առաջ էլ, որովհետև հայերը միշտ խառնւում էին միմեանց հետ, սակայն այդ ժամանակուայ խառնակութիւնն աւելի վըտանգաւոր կերպարանք ստացաւ: Այդ միջոցին Էջմիածնից եկած Մելքիսեդեկ կաթողիկոսը, որին համոզել էին միութեան կուսակիցները, բայց աւելի պարզ ասած, կաշառել էին, եպիսկոպոս է ձեռնադրում 22 տարեկան կուսակրօն քահանայ Նիկոլ Թորոսովիչին, որ գաղթականներից մէկի որդին էր, Կամենեցում ծնուած և Կ. Պոլսում դաստիարակուած, և ձեռնադրում է առանց ժողովրդեան ներկայացուցիչների վկայութեան և հաւանութեան։ Այստեղից ծագեց կատաղի երկպառակութիւն և կռիւ հովուի և իւր հօտի միջև. առաջինին պաշտպանում էր տեղական լատին հոգեւորականութիւնը, իսկ երկրորդին—արքունութիւնը։

Նիկոլ Թորոսովիչը պատմութեան մէջ երեւան է գալիս որպէս եկեղեցիների միութեան գաղափարի մարմնացեալ անձնազոհութիւն, իսկ երբեմն էլ ցոյց է տալիս մինչև անգամ նահատակւելու պատրաստականութիւն։ Այսպէս, օրինակի համար, Եան-Կազիմիրի հետ խօսելիս, որ այդ ժամանակ դեռ իշխան էր, երբ սա համոզում էր եպիսկոպոսին, եկեղեցիներից մէկը տալ հայ լուսաւորչականներին, նա, ինչպէս ասում են, բացականչելով պատասխանում է. «Բարի եղէք և արդարացրէք ինձ Նորին Մեծութեան առաջ. բայց որովհետև ես կաթոլիկ արքեպիսկոպոս եմ, ուստի չեմ կարող տալ և ոչ մի եկեղեցի հերձուածողների ձեռը. յայտնեցէք, խնդրեմ, Նորին Մեծութեանը, որ եթէ կամենում է, թող հրամայէ, որ ինձ սպանեն, նա Բոլեսլաւ (քաջ) կըլինի. իսկ ես—Ստանիսլաւ» *)։

Ըստ երեւոյթին դա շատ գեղեցիկ է, սակայն մեդալն ունի և երկրորդ կողմ, որ ստուեր է ձգում նրա յանուն միութեան կատարած ծառայութիւնների վրայ։ Կարդալով Պաւինսկու հրատարակած յիշատակարանները, հիմնուելով սակաւաթիւ ձեռագիր աղբիւրների վըրայ, եկեղեցիների միութեան իրագործման ամբողջ ծառայութիւնը (եթէ միայն այդ ծառայութիւն կարելի է համարել) պէտք է վերագրենք երկու համեստ և բախտաւոր մարդկանց՝ հայր Գալանոսին և հայր Պիդուին, որոնք միսիոներական ոգևորութեան և նուրբ զարգացած ողջմտութեան հետ միասին ունէին աւելի ևս նուրբ դիպլոմատիքական ներթափանցութիւն, որ միայն իտալացիներին է յատուկ։ Համարձակ կարող ենք ասել, որ եթէ չլինէր Մարիա Լիւդովիկէն (Եան-Կազիմիրի թագաւորի կինը), որ հերետիկոսութիւնը բնաջինջ անելու համար փափագում էր երկնից արքայութեան արժանանալու, եթէ չլինէր Պինիեատելլի նուիրակը, որ շարունակ վախեցնում էր հայերին թագաւորի բարկութեամբ,—բայց մենք գիտենք, որ հայ գաղթականները շատ էին յարգում այդ ժամանակ Լեհաստանում թագաւորող սերունդը,—միութիւնը երբէք գլուխ գալ չէր կարող։

Ճարպիկ Թէատինեաններն այդ կռուի ժամանակ շուտ էին տալիս Նիկոլին, որ

---

*) 1666 թ. օգոստոսի 12-ին Նիկոլը Կամենեց է ժամանում հայր Պետրոսի հետ։ Այդտեղ նա հրամայում է քահանաներին, որ հետեւեալ օրը պատարագ մատուցանեն լատինական եկեղեցու օրէնքով, բայց քահանաները միաբերան մերժում են և գնում են պատմում դատաւորներին։ Ժողովուրդը սաստիկ յուզւում է և կատաղում. Նրանք գոչում են, թէ չենք ոչ ոքի չենք ճանաչում և ոչ ոքի էլ մենք հնազանդիլ, բացի ս. Էջմիածնի կաթողիկոսից, և թէ այդ բռնութիւնների դէմ թագաւորին կը բողոքենք։—«Բանի՛ միութիւն հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հռովմայ» գրքի յառաջաբանում պ. Կ. Եզեանը վերոյիշեալ տողերին կցում է հետեւեալ ծանօթութիւնը. «Յայսմ ժամանակի, յորժամ դիւցազնաբար յարեան հայք Կամենեցի ի պաշտպանութիւն եկեղեցւոյն իւրեանց ընդդէմ անօրէն հրամանաց Նիկոլի՝ հանդիսացաւ առաջապէս կինն Սեֆերովիչ, մայրապետն կուսաստանին հայոց, որոյ ի մեծի պատուի գոլով առ ամենեսեան յորդորէր և քաջալերէր զժողովուրդն մի անսալ բռնութեանցն, այլ ցանկ հաստատուն կալ և մնալ ի հաւատս իւրեանց, թէպէտ և ամենայն ջանիւք իւրեանց հնարէին խափան լինել նման Յիսուսեանք և եկեղեցականք լատինացւոց: Յայս սակս և անձահօրէն գրուցին կնոջ յն հեղինակք կրկին յիշատակարանացս. (էջք 82, 187, 194): Են տեղեկութիւնք հետաքննինք զվարուց այսր Սեֆերովիչի ի մատեան Dr. Antoni-ի ընդ մակագրաւ Nowe Opowiadania Historycsne, ի հատուածին, որ կոչի Wartabied: Էին առ հեղինակին աղբիւրք պատմականք ձեռագիրք, որ չև ևս են ընծայեալք ի լոյս»:— Ահա այս ծանօթութեան մէջ յիշած Wartabied հատուածի թարգմանութիւնն ենք տալիս հայ ընթերցողին, հանելով «Научное Обозрѣніе» ամսագրի սոյն տարուայ 6-րդ և 7-րդ գրքերից: Սոյն յօդուածին կցած ներածութիւնը պատկանում է ռուս թարգմանիչ պ. Ս. Պետրովսկուն, որ տարաբախտաբար համարեա բոլոր ռուսների պէս այն թիւր կարծիքն ունի, որ հայոց եկեղեցին հերձուածական է։

*) Կրակովի Ստանիսլաւ եպիսկոպոսի նահատակութիւնն է ակնարկւում, որ տեղի ունեցաւ XI-րդ դարում Բոլեսլաւ II-րդ Համառ թագաւորի հրամանով։

կասութիւնն արդարացնելու համար մեզ ասում են, թէ կրօնը պէտք է թողնել անհատի սրտին ու խղճին և պէտք է վերցնել նրա ազգութիւնը, բայց մեզ համար անհասկանալի է, թէ ինչո՞ւ կրօնի հետ հաւասարապէս ազգութիւնն էլ չի կարող սրտին և խղճին միայն ենթակայ մի գաղափար լինել։ Մարդկային լոգիկայի ո՞ր օրէնքով ես իրաւունք ունիմ դաւանելու ինչ կրօն ուզենամ կամ ոչ մի կրօն չդաւանելու և միևնոյն ժամանակ իրաւունք չունիմ դառնալու, օրինակ, գերմանացի, պարսիկ կամ թուրք, այսինքն այդ ազգերի անդամ գրուելու և նրանց շահերին ծառայելու։ Երբ որ ազատամտութիւն է, թող կարգին և լիակատար ազատամտութիւն լինի, այլապէս այդ ինչ անմիտ սահմանափակումներ են:

Մեզ ուզում են հաւատացնել, թէ մեր միջազգային տիրացուները տօնում են Մխիթարեան հայրերի գրական գործունէութիւնը միայն։ Հարց. մեր կաթոլիկ գերապայծառներն իրենք արդեօք ի՞նչ նշանակութիւնն են տալիս իրենց վաղուան տօնին, և երկրորդ՝ Մխիթարեան գրականութիւնն ինչ մի երևելի յեղաշրջում է առաջացրել հայ ազգի մտաւոր կեանքի մէջ, որի համար այսքան գլուխ են պատռում։ Ճիշտ է, Վենետիկի և Վիեննայի մեր կրօնաւորները հազարաւոր գրքեր են գրել և հրատարակել, բայց այդ գրքերն իրենց դիակնացած լեզուով, իրենց բովանդակութեամբ, իրենց գներով քանի՞ ընթերցողի են մատչելի եղել հայ ազգի մէջ։ Ի բաց առած այդ հազարաւոր գրքերից մի քանի, յիրաւի, գնահատելի և պատկառելի աշխատութիւններ, մնացածը խղճի ամենայն հանգստութեամբ կարելի է թողնել, որ փոշու մէջ թաղուած մնայ և ցեցերի կեր դառնայ։ Մխիթարեան հայրերն եղել են ջանասէր մտաւոր աշխատաւորներ, բայց գիտնական, այդ բառի բուն, եւրոպական իմաստով —նրանք չեն եղել և չեն կարող լինել զուտ կրօնական և կղզիացած կեանք վարելու պատճառով:

Ուրեմն Մխիթարեան ուխտի ի՞նչն են տօնում մերոնք վաղը։

ԽՐՈՆԻԿՈՆ

Կովկասի կառավարչապետ գեն.-ադ. իշխ. Գ. Ս. Գալիցինը օգոստոսի 23-ին վերադարձաւ Թիֆլիս իւր Պետերբուրգ կատարած ուղևորութիւնից:

— Երեկ, օգոստոսի 24 ին, Կովկասի կառավարչապետ գեն.-ադ. իշխ. Գ. Ս. Գալիցինը և իւր օգնական գեն.-լէյտ. Ա. Ա. Փրեզէն մեկնեցին Բաթում Պետերբուրգից եկող Բարձրագոյն Անձերին դիմաւորելու։

— Վրաստանը Ռուսիայի հետ միացնելու հարիւրամեակի առթիւ Թիֆլիսում լինելիք հանդէսները տեւելու են երեք օր—սեպտեմբերի 26-ին, 27-ին և 28-ին: Որոշուած է այդ օրերը լուսաւորել Կովկասի կառավարչապետի պալատի հրապարակը, Գոլովինսկի պրոսպեկտը, քաղաքային Ալէքսանդրեան այգին, կամուրջները, քաղաքի շրջակայ բլուրները։ Պետական հասարակական հիմնարկութիւնները, ինչպէս և մասնաւոր տները զարդարուած պիտի լինին դրօշակներով, կանաչով և գորգերով։ Յաղթական երկու կամար պիտի կանգնեցնուի, մէկը երկաթուղու կայարանի առաջ, միւսը Բարեատինսկայ փողոցի գլխին, «Թիֆլիսի ժողովարանի» դիմաց։ Սեպտեմբերի 28-ին, ազնուականութեան պարահանդէսի գիշերը, հրավառութիւն պիտի լինի Ս. Դաւթի լեռան վրայ։ Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայեւիչի հանդիսաւոր մուտքի օրը Նորին Կայսերական Բարձրութեանը պիտի դիմաւորեն, ի միջի այլոց, համքարներն իրենց դրօշակներով և զուռնայով: Քաղաքագլուխը Մեծ Իշխանին պիտի մատուցի աղ ու հաց: Հանդէսների ծախքերին պիտի մասնակցին, ի միջի այլոց, այն տանտէրերը, որոնց անշարժ կալուածները գնահատուած են 10,000 րուբլուց աւելի:

— Թիֆլիսում կազմուել է «Մամուլ» անունով մի ընկերութիւն։ Ընկերութիւնը կազմուած է առևտրական հիմունքների վրայ և նպատակ ունի շահագործելու տպարանական և տպագրական գործը։ Նորակազմ ընկերութիւնը պիտի հիմնէ տպարան, ձուլարան և այլն, պիտի տպէ ամեն լեզուներով գրքեր, ինչպէս և նպատակ ունի ձեռք բերելու կամ կապալով վերցնելու պարբերական հրատարակութիւնների իրաւունքը, բացառապէս շահագործելու համար։ Ընկերութեան դրամագլուխն է 120,000 ր., որ կազմւում է 1200 փայերից. փայն արժէ 100 ր., որպիսի գումարը մաս առ մաս կվճարուի։ Արդէն բաւական թւով փայեր ստորագրուել են, և ձեռնհաս անձերից կազմուած լիազօրների մասնաժողովը պատրաստել է ընկերութեան պայմանագիրը, որն առաջիկայում կառաջարկուի փայատէրերի ընդհանուր ժողովին ի հաստատութիւն։ Լիազօրների մասնաժողովն ընկերութեան փայերի առաջին վճարման համար նշանակել է 10°/₀. ուրեմն ընկերութեան փայատէր դառնալը քանի փայի որ ստորագրուել է, այնքան 10-ական ր. պիտի վճարէ առաջին նուագ։ Գործն առևտրական հիմունքների վրայ դրուած լինելով՝ անշուշտ մեծ զարկ է տալու տպագրական գործին, որից սպասուելիք օգուտն ակներև է։

— Օգոստոսի 15-ին Սև ծովում կործանուել է բելգիական «Նաքրամոր» շոգենաւը, որ Բաթումից Հնդկաստան է եղել տանելիս Ա. Մանթաշեանին պատկանող 222,000 փթ կերոսին։ Նաւաստիներից, 40 հոգի, ազատուել են միայն երկու հոգի։ Ապրանքն ապահովագրուած չի եղել։ Նաւը կործանուել է իւր իսկ ծանրութիւնից և ծովի վրայ եղած փոթորկից։

— Կովկասեան ցուցահանդէսի բացումը նշանակուած է սեպտեմբերի 2-ին, ժամը 1-ին։ Ցուցահանդէսը մտնելու համար վերջնականապէս նշանակուած են հետևեալ վճարները. առաջին երեք օրը—մի-մի րուբլի, լի օրերը ցերեկով—20 կ., երեկոյեան—30 կ., բացի հինգշաբթի օրերից, երբ պիտի վճարել 50 կ.։ Կիրակի օրերը ցերեկով –10 կ., երեկոյեան—20 կ.։

— «Նով. Օբ.»-ի ասելով, կառավարչական շրջաններում շուտով խնդիր պիտի քննուի Արաքսի հովտում երկաթուղու գիծ անցկացնելու, որով հնարաւորութիւն կըտրուի շահագործելու տեղական անսովոր հարուստ բնական բերքը։

— Նոյն լրագրի ասելով, ֆինանսների մինիստրութեան մէջ խնդիր է մշակւում իւր երկաթհանքերով հարուստ Զանգեզուրի գաւառը միացնելու անդրկ. երկ. Հաջի-Քաբուլ կայարանի հետ առանձին գծով, որով մատչելութիւն կայ զարկ տալու տեղական արդիւնաբերութեան զարգացմանը։

— Հասարակ ժողովրդի մէջ առողջապահական գիտելիքներ տարածող Պիրոգովեան յանձնաժողովը, «Նովօստի»-ի ասելով, Կովկասում ցրւում է առողջապահութեան հիմնական կանոններ պարունակող թերթիկներ տպագրուած հայերէն, վրացերէն և թուրքերէն լեզուներով։

— Մենք ստացանք Մ. Լերմոնտովի «Դև» արևելեան վէպի հայերէն մի նոր թարգմանութիւնը, որ կատարել է Յովհաննէս Աղամալեան (Բիւրատ): Ռուս բանաստեղծի այս յայտնի պօէմի առաջին թարգմանութիւնը, ինչպէս յայտնի է, պատկանում է Սաաթեանին և տպուած է «Հիւսիսափայլ»ի մէջ։ Հետաքրքրական է համեմատել այս երկու թարգմանութիւններն իրար և բնագրի հետ։ Հանգուցեալ Աղամալեանի թարգմանութիւնը տպուած է Բաքւում սոյն 1901 թ. պատուական թղթի վրայ կապտաւուն մուրով և պատկերազարդ է: Գինն է 30 կ.: Հանգուցեալ Աղամալեանը «Նոր Դար»-ին աշխատակցել է, և ընդունակ երիտասարդներից էր:

— Խմբագրութիւնս ստացաւ բժ. Ա. Բուդաղեանի հետևեալ նորագոյն աշխատութիւնները. 1) «Ժառանգականութիւն և դաստիարակութիւն», էջ 72, գինը 15 կ., 2) «Մարմնամարզութիւն» (25 պատկերներով), էջ 51, գինը 20 կ., 3) «Մանկավարժական համառօտ զրոյցներ», էջ 70, գինը 15 կ.։ Այս երեք աշխատութիւններն էլ տպուած են Պետերբուրգում, սոյն 1901 թուին, Պուշկինեան արագատիպ հայոց նոր տպարանում։ Յարգելի բժշկի աշխատութիւններն առ հասարակ աչքի են ընկնում իրենց բարեխիղճ կազմութեամբ, պարզ լեզուով, խիստ մատչելի գներով և շատ մաքուր տպագրութեամբ։

ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ

ՄՈԶԴՈԿԻՑ.—Ահա երկու տարի է, որ գործակալ չլինելու պատճառով եկեղեցական գործերը գտնւում են անկարգ վիճակի մէջ։ Օրինակի համար, ս. Աստուածամօր եկեղեցու Խոսրովեան քահ. գերեզմանատանը պատարագելիս տանում է իւր հետ մի տիրացու, որպէս զի օգուտն իրենց մնայ։ Ո՞րտեղ տեսնուած բան է ս. պատարագն առանց դպրի մատուցանել. Նոյն իսկ գիւղական եկեղեցիներում դպրութիւն անող լինում է: Սա ինչ ագահութիւն է։ Զարմանալին այն է, որ սպասաւորը «Խորհուրդ խորին» երգելուց ժամկոչն է զգեստաւորւում, իսկ մնացեալ ժամանակն սպասաւորը վազվզում է սեղանի վրայ, աղաւաղելով աղօթքները։ Եթէ մի գործակալ նշանակուէր, այն ժամանակ այդպիսի անկարգութիւններ տեղի չէին ունենայ, որովհետև գործակալից կակնածէին, իբրև իշխանութեան ներկայացուցչից։

ՇՈՒՇՈՒՑ.—Օգոստոսի 17 ին հայ դրամատիկական ընկերութիւնը ներկայացրեց առաջին անգամ Շուշում Գանտոփերի և Բրոզինների «Գնչուհի Զանդա» դրամը։ Բաւական թւով հանդիսականներ կային։ Իրենց խաղով աչքի ընկան օր. Վարդիթեր Զանդայի դերում և պ. Պետրոսեան Պոնտադի Չուկոյի դերում։ Հետևեալ (վերջին) ներկայացումը լինելու է «Ռուզան» ողբերգութիւնը։

—Երկու օր է, ինչ եղանակները մեզանում փոխուեցին. անձրև եկաւ և մըրսելու չափ ցուրտ է անում։

ՄԽԻԹԱՐ ԱԲԲԱՅ ԵՒ ԻՒՐ ԳՈՐԾԸ*)

II.

Մխիթար աբբայի կենսագրութիւնը և գործունէութեան պատմութիւնը համառօտ կերպով անելուց յետոյ, աւելորդ չի լինիլ ընթերցողներին անցողակի կերպով ծանօթացնել գոյն այդ Մխիթարի հիմնած միաբանութեան յաջորդ սերունդների վարիչների կեանքի և գործունէութեան հետ:

Մխիթար իւր կտակում ի միջի այլոց ցանկանում էր, որ իւր յաջորդներն աբբայութեան կոչումն ստանան ոչ այլ կերպ, քան եթէ ամբողջ միաբանութեան ընտրութեամբ: Կտակի այդ տրամադրութեան համաձայն, միաբանութիւնը 1750 թ. ապրիլի 6 ին ժողով գումարեց և Մխիթարի առաջնակարգ աշակերտներից ընտրեց Կ. Պոլսեցի Ստեփաննոս Մելքոնեան վարդապետին որպէս աբբայ։ Սա մօտ 50 տարի վարեց իւր պաշտօնը նոյն ոգով, ինչ ուղղութեամբ որ վարում էր իւր նախորդը։ Ասում են, որ աբբայ Մելքոնեան բնութեամբ խիստ յամառ մարդ էր, և հէնց այդ հանգամանքից առաջ եկած երևոյթներին պիտի վերագրել այն, որ Ստեփաննոս աբբայի օրով անհամաձայնութիւն ընկաւ Մխիթարեան միաբանութեան մէջ, և միաբանների փոքրաթիւ մասը բաժանուեց 1773 թ. և հեռացաւ Թրիէստ նոր մենաստան կառուցանելու: Այդ բաժանուած մասն է, որ այսօր Վիեննայի Մխիթարեան միաբանութիւնն է կազմում։

Միաբանութեան նիւթականը նախանձելի դրութեան մէջ չէր, երբ Մելքոնեան աբբայութիւնն ստանձնեց: Այդ հանգամանքով է բացատրւում այն, որ յիշեալ աբբայի օրով լոյս տեսան միայն այն գրքերը, որոնք արդէն Մխիթարի ժամանակ էին սկսած տպուել, և մէկ էլ՝ մի քանի աննշան գրքեր և օրացոյցներ։ Դարձեալ նիւթական պակասութեանը պիտի վերագրել այն հանգամանքը, որ միայն 1788 ից յետոյ կարելի եղաւ տպարան հաստատել ս. Ղազարի կղզում, և այն էլ հայ ազգի օգնութեամբ։

Ստեփաննոս աբբայ կրկնապատկեց քարոզիչ-վարդապետների, ինչպէս և վանական աշակերտների թիւը։ Նրա ժամանակ յաջորդեցին Մխիթարեան միաբանութեան երկրորդ և երրորդ սերունդները: Այս աբբայի աչքի ընկնող աշակերտներն են՝ Չամչեան, Ինճիճեան, Ստեփաննոս Ագոնց և այլք։ Ստեփաննոս աբբայի ժամանակ վերջացաւ նոյնպէս զանգակատան շինութիւնը, ինչպէս և կառուցուեց տպարանի շէնքը։

Այստեղ հարկ ենք համարում ասել, որ պ. Ա. Երիցեան իւր համառօտ պատմութեան մէջ յայտնում է, թէ Մխիթար «փոլիթիքայի» համար, առերես, կաթոլիկութիւն է ընդունել, որպէս զի կարելի լինի ազատ կերպով իւր նպատակին, այսինքն հայոց մէջ լուսաւորութիւն տարածելու գործին ծառայել։ Այդ «փոլիթիքային» անշեղ կերպով հետևում էր և Ստեփաննոս Մելքոնեանը, որ վախճանուեց 1800 թ.։

Մխիթարեան միաբանութեան երրորդ աբբան է Ստեփաննոս վարդապետ Ագոնց, որին տալիս էին և «Քէօվէր» մականունը։ Սա Տրանսիլվանիա գաղթած հայերից էր։ 1800 թ. աբբայ ընտրուեց։ Իւր նախորդի նման, սա էլ ծանօթ էր Մխիթարի քաղաքականութեանը։ Ագոնցը 1804 թ. Պիոս Է. պապից հրաւիրուեց Հռոմ և ձեռնադրուեց «արքեպիսկոպոս Սիւնեաց աշխարհի» վրայ։ Նոյն Ագոնցի օրով, շնորհիւ Վիեննայի մխիթարեանների, ինչպէս նաև այսպէս կոչուած՝ Կոլէժցիների, որոնք խիստ դէմ էին Վենետիկի մխիթարեաններին, Հռոմի կարդինալների ժողովը վերահաստատ է լինում Վենետիկի Մխիթարեան միաբանութեան անդամ Միքայէլ վարդ. Չամչեանի ձգտումներին և իւր համոզումը գոյացնում յիշեալ միաբանութեան վրայ

կողմն որ կամենում էին։ Իրաւ է, իւր հովուական թղթերում նա բաւականին փառաւոր կերպով էր գրում իւր մասին՝ «ողորմութեամբն Աստուծոյ և առաքելական աթոռանիստ քաղաքի Իլվովի հայոց արքեպիսկոպոս, հովիւ հայ ազգի համայն Լեհաստանում և Վալախիայի թագաւորութեան մէջ, սբ. Միքայէլի ասպետ և սբ. Հօր ընթերակայ»,—այսպէս էր նա բեմի վրայ, իսկ կուլիսների ետևում նա բաւականին կերպարանափոխւում էր։ Սիրում էր գեղեցիկ սեռը, «մօտը պահում էր անապատից փախցրած մի կոյս ծագումով շլեախտուհի, պահում էր որպէս իւր օրինաւոր կինը, և լեհերից շատերը կարծում էին, թէ հայ եպիսկոպոսները կարող են պսակուել»։ Մինչև անգամ այդ կնոջից երկու արու զաւակ ունէր, որոնք մեծ ազդեցութիւն էին ունենում իրենց հօր վրայ: Ձիեր էր վաճառում, այն էլ ոչ միշտ բարեխղճութեամբ, կեղեքում էր հոգևորականութիւնն ու ժողովուրդը։ Մի անգամ գալիս է նա Կամենեց, և երբ տեղական ծխականները չեն վճարում նրան ճանապարհածախսը, նա վերցնում է որպէս գրաւ եկեղեցուց արծաթէ անօթները և մինչև անգամ սեղանից աշտանակները, իսկ երբ պատկանելին հատուցանում են, նա դարձեալ չէ վերադարձնում առած գրաւը: Այդ պատճառով էլ յետոյ՝ երբ լուր էին առնում, թէ արքեպիսկոպոսը ժամանել է, հայ եկեղեցիներից դուրս էին տանում բոլոր թանկագին իրեղէնները, որ ագահ սրբազանից և ապտեհից թագցնեն...Այդ դեռ քիչ է. միութեան գործը գլուխ բերելու ամենատաք ժամանակ, երբ ինքը հրապարակով խօսում էր որպէս միութեան ջերմ կուսակից, նա էլ Կամենեցի բնակիչներից ընդունեց մի քանի հարիւր ոսկի, գրաւոր կերպով կապուելով, որ չի ստիպել նրանց «նորամուծութիւններն» ընդունելու։

Այս բոլորն այնքան էլ չէին տրամադրում հերձուածողներին դէպի եկեղեցու միութիւն տարածողը։ Իլվովի վաճառականները՝ քառասուն տարի կռուելով եկեղեցու դաւանանքների համար, աղքատացան, կորցրին իրենց կարողութիւնը։ Մոլեռանդ կերպով կապուած լինելով հին եկեղեցու հետ, նրանք մոռացել էին առևտուրը, անձնատուր էին եղել միայն կրօնական վիճաբանութիւնների և ատենախօսութիւնների, որոնցով լցուած էր նրանց կեանքն այդ ժամանակ:

Կարդալով հ. Պիդուի յիշատակարանը՝ մարդ զարմացած է մնում, թէ որքան ճարպիկ էին գործում միսիոնարները խաւարի և նախապաշտութեան դէմ, որ աւելի և աւելի էին բորբոքում Արևելքից նոր եկողները: Վլադիսլաւ IV տոգորուած էր համբերատարութեան սկզբունքներով և թուլացնում էր գաղթականների գլխին ընկնող հարուածները, իսկ շլեախտական հասարակութիւնն այդ կռուի վրայ բաւականին սառնասիրտ էր նայում։ Սրա կարծիքով, հայերին տուած արտօնութիւնները չէին կորցնում իրենց պարտաւորեցուցիչ ոյժը, այնպէս որ վերջ ի վերջոյ միութեան կուսակիցների և լուսաւորչականների միջև տեղի ունեցող ատենախօսութիւնները պիտի լինէին պաշտօնական կանցլերի ներկայութեամբ, որ դատաւոր էր ընտրուած լինում կռուող կողմերի համար, և նա վճռում էր, թէ որ կողմն է արդար։

Վլադիսլաւ IV ի մահից յետոյ գործի վիճակը փոխուեց, այնպէս որ 1665 թ. Իլվովի հայ ծխականները շրջակայ գաւառների հետ միասին ընդունեցին միութեան դաշնագիրը և հանդիսաւոր կերպով ուխտեցին կատարել։ Ի մխիթարութիւն պիտի աւելացնենք, որ այդ բոլորը եղաւ առանց մի կաթիլ արիւն թափելու։

Սակայն մնում էր Կամենեցը։ Այստեղ գործն աւելի դժուար էր առաջ գնում։ Վերը մենք ասացինք, որ Մեծն Կազիմիր նշանակելով հայոց եպիսկոպոսութիւն, չէր որոշել նրա սահմանները։ Նա մինչև անգամ չէր կարող մտցնել այդ եպիսկոպոսութեան սահմանի մէջ Պոդոլի նահանգը, որովհետև այդ ժամանակ այդ նահանգը դեռ չէր պատկանում Լեհաստանին։ Այդ իսկ պատճառով Կամենեցի բնակիչները մի տեսակ կամայականութիւն էին ցոյց տալիս Իլվովի հոգևոր իշխանութեան վերաբերմամբ, կամ ուրիշ խօսքերով ասած, բոլորովին չէին ընդունում նրան: Այսպէս, օրինակի համար, Խոտլուբէյը տեղական եկեղեցու հիմնարկութեան թղթում (1398) պարզ ասում է, որ ծխականներին է յանձնում տաճարը «հայոց Եանի ներկայութեամբ՝ համայն Ռուսիոյ և Վալախիա երկրի արքեպիսկոպոսի, որովհետև վերոյիշեալ մեր բոլոր գաւառների հոգևոր կառավարիչը այժմ նա է»։ Թուցէ այս Եան (Յովհան) Աւետիք եպիսկոպոսն է յիշում հ. Սադոկ Բարոնչը իւր գրքում, ասելով որ XV դարում նա էր կառավարում Կամենեցը։ Իլվովի այդ ժամանակուայ հայ քահանաների ցուցակում մենք չենք պատահում հ. Եանին և ենթադրում ենք, որ եթէ Իլվովը նրա իշխանութեան ներքոյ լինէր, անշուշտ արտօնութեան մէջ յիշատակութիւն կլինէր։

(Կը շարունակուի)

Մ. Բարխուդարեան

---

*) Տես «Նոր-Դար» № 133.

ահասարակ. բայց կարդինալների այդ ժողովը լաւ է համարում չհասկացող ձևացնել իրեն Վենետկի միաբանութեան ձգտումներին, որպէս զի յիշեալ մխիթարեանք աւելի չգրգռուեն: Հռոմի այս ներողամտութիւնը իւր ազդեցութիւնն ունեցաւ Մխիթարեան միաբանութեան վրայ, որի Կ. Պոլսում գտնուած անդամներն այդ տեղի հայոց պատրիարքարանի հետ բանակցութեան մէջ էին մտել ս. Ղազարի վանքը գլխովին միացնելու ս. Էջմիածնի հետ, որպիսի միացմանը եթէ Հռոմի պապն արգելք հանդիսանար և իրենց գոյութեան վտանգ սպառնար, այդ դէպքում մխիթարեանք մինչև իսկ մտադիր էին թողնելու Վենետիկը և հեռանալու Անգլիա: Մխիթարեան միաբանութեան և Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի միջև եղող բանակցութիւնները ցանկալի վախճանի չհասան, շնորհիւ այսպէս կոչուած Կոլէժցիների և Վեննայի մխիթարեանների: Վերջիններիս հակառակութիւնը վենետիկցիների հետ կրօնական չէր այնչափ, որչափ դրամական: Վեննայի մխիթարեանք դեռ Թրիէստում գտնուած միջոցին, լսելով որ Հնդկաստանում հարուստ հայեր կան, ուղարկում են այնտեղ երկու գործակալ-վարդապետ՝ Բուդայեան և Մեհերեան: Սրանք երբ Մադրաս հասան, ծանօթացան տեղացի հարուստ հայերից Ռաֆայէլ Ղարամանեանին, որ իրենց տուեց մի նշանաւոր գումար՝ Թրիէստի մխիթարեանց հասցնելու համար. վերջիններս պարտաւորւում էին այդ գումարը գործադրել ինչ-որ հնախօսական պատմութեան տպագրութեան վրայ: Ռաֆայէլ Ղարամեանի մահից յետոյ Մադրասում գտնուող երկու մխիթարեանները (Թրիէստի) վերադարձան ս. Ղազարի միաբանութեան գիրկը,բերելով իրենց հետ և Ղարամեանի կտակը: Այդ կտակը դեռ ևս կատար չէր ածուած, և ահա 1816 թ. յիշեալ Ղարամեանի փեսայ Սամուէլ Մուրատեան վախճանուելով մի մեծ գումար է կտակում հայ որբ և աղքատ երեխաների համար Եւրոպայում դպրոց բանալու նպատակով, որպէս խորհուրդ կըտայ և կըմիջնորդի Վենետկի Մխիթարեան միաբանութիւնը: Աբբայ Ագոնց, իմանալով այս լուրը, ուղարկում է Հնդկաստան երկու Նուիրակ, որպէս զի բանակցեն այդ խնդրի առթիւ. Նուիրակներն առանձին հրահանգներ են ստանում Ագոնցից. այդ հրահանգներն էին՝ 1) աշխատել այնպէս անելու, որ Մուրատեան վարժարանի մատակարարութեան ղեկը միայն և միշտ Վենետկի Մխիթարեան միաբանութեան ձեռքում մնայ, որչափ որ այդ միաբանութիւնը կանգուն կըմնայ. 2) միաբանութիւնը կտակի մատակարարութեան հաշիւը չպիտի տայ կտակակատարներին: Մխիթարեանք, գիտենալով հանդերձ որ իրենց արած այս պահանջներն ապօրինի են, յիշեալ նպատակն իրագործելու համար ձեռք անցկացրին 2,000,000 ֆր. մի պատկառելի գումար:

1824 թ. յունուարի 29-ին Ագոնց աբբան վախճանուեց 84 տարեկան հասակում, մօտ 24 տարի աբբայութեան պաշտօն վարելուց յետոյ: Սրա կենսագրութիւնը տպուեց Վենետկում 1825 թ. հայերէն և լատիներէն լեզուներով:

Աբբայ Ագոնցի վախճանուած տարին իրեն յաջորդ ընտրուեց Սուքիաս վարդ. Սոմալեան և ձեռնադրուեց «արքեպիսկ. Սիւնեաց աշխարհի»: Սրա օրով 1830 թ. Թիւրքիայում ապրող հայ կաթոլիկներն իրաւունք ստացան իրենց համար առանձին պատրիարք ունենալու: Այդ պատրիարքութեան համար Վեննայի մխիթարեանք, կոլէժցիք և լիբանանցիք առաջարկում էին լատինական ծիսակատարութեան համակրող անձնաւորութիւնները պատրիարք ընտրել, բայց վենետիկցիք աշխատում էին դնել այնպիսի մի պատրիարք, որ խորշէր լատինականութիւնից և հաստատ պահպանէր հայ եկեղեցու բոլոր արարողութիւններն և սովորութիւնները: Վենետկի մխիթարեանք յաղթանակը տարան: Նոյնպէս Սուքիաս աբբայի ժամանակ սկսուեց հայ կաթոլիկների Հասունեան և Հակահասունեան յայտնի պայքարը, և վենետկցիք մեծ ընդհարում ունեցան Հասուն պատրիարքի հետ: Սոյն աբբայի ժամանակ սկսուեց և վերջացաւ Ռաֆայէլի և Մուրատեանի կտակների երկարատև վէճը, որ վերջացաւ յօգուտ Մխիթարեան միաբանութեան: Վերջապէս, Սոմալեան աբբայի ժամանակաշրջանը, եթէ այսպէս կարելի է ասել, Վենետկի Մխիթարեան միաբանութեան ոսկեդարը եղաւ և այդ շրջանում սկսուեց հրատարակութիւնը «Բազմավէպ հանդիսարան»-ի: Երկարատև հիւանդութիւնից յետոյ՝ արքահայր Սոմալեան վախճանուեց 1846 թ. սկզբներին:

(Վերջը միւս անգամ)

Աչք

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

«Ժամանակ», հանդէսն գրական, գիտական, գեղարուեստական և քաղաքական, խմբագրութեամբ Ս. Գ. Հախումեանի, 1 տարի—1901, № 1—յուլիս, Պարիզ:

Եթէ չենք սխալւում, ռուսահայերից եթէ ոչ ամենաառաջինը, գէթ ամենաառաջիններից մէկն է պ. Ս. Հախումեանը, որ պարբերական թերթի հրատարակման է ձեռնարկում իւր հայրենիքից դուրս: Ցարդ այդպիսի փորձեր արել և անում են միմիայն թրքահայերը, հարկաւ այդ բանի համար բանաւոր պատճառներ ունենալով: Ռուսահայ հրապարակախօսի արտասահմանում պարբերական թերթ հրատարակելու ձեռնարկութիւնն ևս ուրիշ բան չի ապացուցանում ներկայումս, եթէ ոչ ժամանակի ոգին: Եւ մենք կարծում ենք, թէ հէնց այդ ժամանակի ոգին է, որ Պարիզում ստեղծել է «Ժամանակ»-ը:

Իւր նմանը չունեցող մի տարօրինակ երևոյթ, որ խիստ աչքի է ընկնում, այդ հայոց բուն հայրենիքից դուրս հայերէն պարբերական թերթի թիւը հետզհետէ աճելն է: Այս մասին հետևեալ հետաքրքրական տեղեկութիւններն է հաղորդում պ. Ահրիմանը «Ժամանակ»-ի առաջին համարում «Հայկական մամուլ» խորագրի տակ: Հայկական կեդրոններից հեռու ներկայումս հրատարակւում է մօտ 20 պարբերական թերթ, որոնցից ոչ մին մուտք չունի Թիւրքիա, ուր, ըստ Էլիզէ Ռեքլիւի, ապրում է 1.383,779 հայ: Այդ թերթերից միայն մի քանիսը մուտք ունին Ռուսիա և Կովկաս, ուր ապրում է 1.500,000 հայ, և Պարսկաստան, ուր ապրում է 150,000 հայ և ուր լրագիր և առհասարակ պարբերական հրատարակութիւն ստացող հայերի թիւը 20 հոգուց չի անցնում: Այսպիսով յայտնւում է, որ իրենց հայրենի հողից պոկուած և Եւրոպայի, Ամերիկայի ու Աֆրիկայի զանազան կողմերը ցրուած 60,000 հայեր (ըստ Էլիզէ Ռեքլիւի) ունին քան հատ պարբերական թերթ, մինչդեռ մնացած 3.033,779 հայերը (հաշուելով նաև եւրոպական Թիւրքիայի հայերին) այդչափ թուով պարբերական հրատարակութիւններ չունին: Սա, ի հարկէ, մի աննորմալ դրութիւն է, որի պատճառները, սակայն, պարզ են...

«Նոր հանդէսի գոյութեան իրաւունքը» խորագրով առաջնորդող յօդուածի մէջ «Ժամանակ»-ը, խօսելով ազգերի բարօրութեան գործում մամուլի և գրականութեան կատարած դերի մասին, ասում է, թէ հայ ազգն անցեալ ու ժամանակակից պատմութեան անհերքելի ապացոյցներով ցոյց է տուել, որ ինքը ձգտում է մասն ունենալ ընդհանուր քաղաքակրթութեան և մարդկային ընդհանուր երջանկութեան մէջ: «Չենք ուրանում, — շարունակում է Նոր հանդէսը,—որ հայ ազգի զանազան համայնքները, երկրագնդի զանազան մասերում, զանազան իդէալներ ու ձգտումներ ունին: «Ժամանակ»-ը գալիս է օգնելու գործակցելու հայի միայն մի ընդհանուր իդէալին, այն է՝ որ հայ ազգն իրապէս, գիտակցօրէն մասնակից լինի եւրոպական մտաւոր շարժման, որ նա սիրէ իւր մայրենի լեզուն իբրև միակ բնական ճըշմարիտ և ուժեղ գործիք գիտութիւն և քաղաքակրթութիւն իւրացնելու»:

Ինչ վերաբերում է ուղղութեանը,Նոր հանդէսը յայտարարում է, որ իւր ուղղութիւնը լինելու է ճշմարտութիւն, գիտութիւն, գեղարուեստ: «Մոռացուել է ճշմարտութիւնը, գիտութիւնը, գեղարուեստը,—ասում է «Ժամանակ»-ը,—ու նրանց փոխարինել են «ազատամիտ, խաւարամիտ, յետադիմական, յառաջադիմական» անմիտ բառերը: Սա մի կեղծ դրութիւն է,--շարունակում է Նոր հանդէսը,—որ ստրկացրել է հայ ժողովրդի միտքը, ու պէտք է հայ ազգի միտքն ազատել այդ ստրկութիւնից»:

Մենք այս խօսքերն արձանագրում ենք առանձին գոհունակութեամբ, որովհետև սա այն բարձրագոյն աղաղակի արձագանքն է, որ տասնութ տարի շարունակ կրկնում է «Նոր-Դար»-ը, աշխատելով հայել քարացած ուղեղների մէջ այն միտքը, թէ առաջադիմութիւնն «անմիտ բառերի» մէջ չէ, այլ ամեն բանի, ամեն երևոյթի գիտակցօրէն և քննադատօրէն վերաբերուելու մէջ, իսկ որտեղ կայ գիտակցութիւն և քննադատութիւն, այնտեղ կայ անշուշտ և ճըշմարտութիւն, գիտութիւն, գեղարուեստ: Այս տեսակէտից ոչ թէ միայն գոյութեան իրաւունք ունի Նոր հանդէսը, այլ և անհրաժեշտ է նրա գոյութիւնը:

Մեր վիպագրներից «Ժամանակ»-ի մէջ հանդիպում ենք Պերճ Պռօշեանի և Վ. Փափազեանի անուններին: Պռօշեանը իւր «մասամբ իրականից» վերցրած «Վարժապետ» վերնագիրը կրող պատկերի մէջ ցոյց է տալիս գիւղական հայ իդէալական վարժապետի տիպը և այն, թէ ինչպէս այդ վարժապետը խելագարութեան դժբաղդութեանն ենթարկուելով, նրա բազմանդամ ընտանիքը մնում է նրա քրոջ վրայ ծանրացած: Պատկերը շարունակելի է, գրուած է հեղինակին յատուկ զրուցատրական պարզ լեզուով և չափազանց նման է նրա միւս գրուածքներին, որով և կարծում ես, թէ նոր բան չես կարդում, այլ կարդում ես Պռօշեանի ցարդ ունեցած գրուածքներից մի մոռացուած կտոր: Պռօշեանի տաղանդի ամենախոշոր պակասութիւնն այն է, որ նա որքան շատ է գրում, այնքան նոր բան քիչ է տալիս: Այս է պատճառը, որ նրա մի որևէ նոր գրուածք լոյս տեսնելիս գրեթէ ոչ մի հետաքրքրութիւն չի զարթեցնում ընթերցող հասարակութեան մէջ:

Նոր բան չենք տեսնում նաև Փափազեանի «Երկրի ձայնը» պատմուածքի մէջ: Հեղինակը դուրս է բերում հայ գաղթականի ծանր վիճակն օտար երկրում և իւր երկրի համար ունեցած կարօտը: Այս նիւթի վրայ վերջին տարիներս շատ է գրուած հազար ու մի ձեւով և միշտ լալկան տոնով: Լեզուն ճապաղ է: Հանդիպում ենք այսպիսի անհասկանալի պարբերութիւնների. «մի խումբ կանոնաւոր կամ անկանոն հաճոյքներ». «սողոսկում են քրտինքիդ մօտ»:

Այնուհետև գալիս են թարգմանութիւններ «Ճաշակ եւրոպական գրականութեան» վերնագրի տակ (Իբսէնի «Թերժէ Վիժէն», Ալֆրէդ Կապիւսի «Ռուէնի բաղը», Արման Սիլվեստրի «Վերջին տենչանք»): Ընտրութիւնն աջող է, միայն ցանկալի է, որ թարգմանութիւնների լեզուի վրայ լաւ խնամք տանուի: Նոյնը կարելի է ասել Ապոլլօն Մայկովի «Քլերմոնտի ժողովը» գեղջիկ ոտանաւորի մասին:

Գիտական բաժնի մէջ զետեղուած է երեք յօդուած՝ Մ. Պագտասարեանի «Գիտութեան արժէքը», Ս. Մանդինեանի «Երազների ուսումնական մեկնութիւնը» և Մ.-ի «Ֆրանսիական բժշկ. ակադեմիան և գաղղիական ախտը»: Ի նկատի ունենալով գիտական երկերի աղքատութիւնը մեզնում, ցանկալի է, որ Նոր հանդէսն աւելի լայն ծաւալ տայ իւր այս բաժնին:

Առանձին հետաքրքրութեամբ կարդացւում է պ. Ահրիմանի «Հայկական մամուլ» յօդուածը: Այդ յօդուածը նուիրուած է Նախկին և այժմեան «Մուրճ» ամսագրին:

«Ժամանակ»-ի մէջ զետեղուած է մի հայի բժշկի կարծիքն այն մասին, «թէ ինչպէս է հասկանւում նա ռուսաստանցի հայի ձեռքով Ֆրանսիայում հրատարակուող հայերէն լեզուով մի հանդիսի բնորոշ տիպարը»: Այդ բժիշկը ոչ հրապարակախօս է, ոչ գիտնական և ոչ գրող, հետևաբար ինչ մի առանձին նշանակութիւն ունի ընթերցողների համար նրա կարծիքը մի նոր հանդիսի մասին, որ տեղ է գտել «Ժամանակ»-ի մէջ. մենք այդ չհասկացանք:

Ի վերջոյ քաղաքական մի շատ փոքրիկ յօդուածի մէջ «Ժամանակ»-ը համառօտակի նկարագրում է քաղաքական ներկայ դրութիւնը: Չինական անցքերի մասին խօսելով, յօդուածագիրն ասում է. «Քրիստոնեայ Եւրոպան վաղուց կըլինէր կործանած ամբողջ Ասիան և նրան արեան լիճ կըլինէր դարձրած,եթէ Ասիայի սահմանակից և մի մասի տէր չլինէր ռուսական ազգը»:

Միթէ եւրոպական ազգերն այդ աստիճան վայրենի են մնացել:

Այս է «Ժամանակ»-ի առաջին համարի ամբողջ բովանդակութիւնը: Մոռացանք յիշել, որ այդ համարի մէջ կայ և մի փոքրիկ ինքնուրոյն ոտանաւոր «Քընար» վերնագրով: Ինչպէս «Նոր-Դար»-ը նկատել էր, նիւթերն առատ չեն, բայց բազմակողմանի են: Զետեղուած են հետևեալ պատկերները. Ապոլլոն Մայկով, Հենրիկ Իբսէն, Թերժէ Վիժէի գերեզմանը և Արման Սիլվեստր:

Թէ որքան կենսունակութեան ույժ կունենայ «Ժամանակ»-ը, այդ ցոյց կըտայ ապագան. բայց մեր ջերմ ցանկութիւնն է, որ նոր հանդէսը բարգաւաճի և հայկական մամուլի մի անհրաժեշտ օրգանը դառնայ:

Մ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԹԻՒՐՔԻԱ ԵՒ ՖՐԱՆՍԻԱ

«Frank. Zeit.» ի Կ. Պոլսի թղթակիցը հետևեալ մանրամասնութիւններն է հաղորդում ֆրանս-թրքական միջադէպի մասին:

«Թիւրքիայի հետ դիւանագիտական յարաբերութիւնները դադարեցնելուց առաջ Կոնստանն օտարերկրեայ բոլոր դեսպանատներին մի յայտագիր ուղարկեց, որի մէջ հաղորդում էր, թէ իւր կառավարութեան հրամանով հեռանում է Կ. Պոլսից, իսկ դեսպանատան խորհրդական Բապստ ժամանակաւորապէս մընում է մասնաւոր շահերին վերաբերեալ ընթացիկ գործերը վարելու համար: Միևնոյն ժամանակ Դուլը հեռագրեց Պարիզի իւր դեսպան Մինիր-Բէյին (նա այս րոպէիս գտնւում է Զուիցերիայում), որ նա չվերադառնայ Պարիզ և այդպիսով խոյս տայ իւր անցաթուղթերը յետ ստանալուց: «Vautour» մարտանաւի Թերապիայից դէպի երկաթուղու կայարան մեկնելուց մի քիչ առաջ բոլոր դեսպանները հրաժեշտի այցէին տուել Կոնստանին դեսպանատան մէջ. այդ բանը նըրանք դիտաւորութեամբ էին արել, որպէս զի միաժամանակ երկաթուղու կայարան գնալը ցոյցի բնաւորութիւն չունենար սուլթանի դէմ: Վերջին րոպէին սուլթանը փորձ արեց Կոնստանին յորդորելու, որ մնայ: Երբ «Vautour»-ը խարիսխ ձգեց Ստամբոլում երկաթուղու կայարանի առաջ, իբրև սուլթանի պատուիրակներ նաւը բարձրացան ատագ-աբարօզապետ Իբրահիմ և հանքերի ու անտառների մինիստր Սելիմ-փաշա: Սուլթանը համաձայնել էր կատարել բոլոր պահանջները, բայց Կոնստանը պահանջեց գրաւոր համաձայնութիւն և ասաց, որ այդ պայմանով միայն գոհացում կըտայ սուլթանի ցանկութեանը և կըվերադառնայ: «Թուղթ տուէք ինձ,—բացականչեց նա մի քանի անգամ,—խօսքեր ես շատ լսեցի»: Բանից երևաց, որ պատուիրակները թուղթ չունեին: Յետոյ մինիստր Սէլիմ փաշան դիմեց Կոնստանի կնոջը, խնդրելով որ նա յորդորի իւր ամուսնուն մնալու, բայց նա տարակեց, որ ինքը չի կարող խառնուել քաղաքական գործերին:Այն ժամանակ երկու պատուիրակներն էլ հեռացան նաւից: Յետագայում Իբրահիմը նորից մօտեցաւ Կոնստանին,բայց դեսպանը չոր-չոր ասաց նրան, որ ամեն ջանք անօգուտ է: Դիւանագիտական լուրջ շրջաններում ասում են, որ Կոնստանն անցել է հարկաւոր չափը. նա ուզում էր հեռանալ Կ. Պոլսից և նախապատիւ համարեց այդ բանն անել կարելոյն չափ մեծ աղմուկով»:

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՖՐԻԿԱ

Սրանից մի ամիս առաջ Տրանսվաալի կառավարութիւնը նախագահ Կրիւգերից մի նամակ է ստացել, որի մէջ մեծ ծերունին, խրախուսելով իւր ժողովրդին հաւատի խօսքերով, վստահութիւն էր յայտնում, թէ բուրները պիտի յաղթեն թշնամուն: «Այդքան զոհերից յետոյ,—գրում էր Կրիւգերը,—դուք պարտաւոր էք շարունակել կռիւը և վստահ եղէք, որ ես ամեն միջոց ձեռք եմ առել գերի կանանց և նրանց երեխաներին պաշտպանելու համար»: Այս պատասխանը քըննելու համար Տրանսվաալի և Օրանժի հասարակապետութեան կառավարութեանց անդամները ժողով էին գումարել, որին, ի միջի այլոց, մասնակցում էին Քրիստիան Դևետ, Լուի Բոթա և գեներալ Դելարէյ: Ժողովը, «Frankfürt. Zeit.»-ի ասելով, միաձայն ընդունել է հետևեալ որոշումը, որն և յայտարարուած է բուր ժողովրդին. «Ի նկատի ունենալով, որ Կապի գաղութում մեր եղբայրները հետզհետէ աւելի բացարձակ ապստամբում են ստրկացնողների դէմ. ի նկատի ունենալով, որ յանուն անկախութեան մեր արդէն տուած ահագին զոհողութիւնները զուր պիտի անցնին, եթէ մենք այժմ հաշտութիւն կայացնենք. ի նկատի ունենալով, որ անկախութեան կորուստը մեզ համար հաւասարազօր է ազգային մահուան. ի նկատի ունենալով, որ մեր համաքաղաքացիները, նմանապէս և նրանց կանայք ու երեխաները, ազատուած են կախ մղելու,—ինչ որ մենք Աստուծոյ ողորմութեան նշան ենք համարում,—ի նկատի ունենալով այս բոլորը, մենք վճռեցինք.—խօսք անգամ չի կարող լինել հաշտութեան ոչ մի պայմանի մասին, մինչև որ չպահովուի մեր անկախութիւնը և մինչև որ ներում չստանան Կապի գաղութի մեր եղբայրները. աննկուն ուժով մենք կըշարունակենք պատերազմը, գործադրելով այն բոլոր միջոցները, որոնք անհրաժեշտ են մեր արդար գործի յաղթանակի համար»: Ստորագրել են Շտայն և Շալկ Բուրգեր:

—«Daily Telegraph»-ի թղթակիցը տեսակցութիւն է ունեցել Կրիւգերի հետ, որն, ի միջի այլոց, ասել է նրան. «Ես բաւականաչափ գիտակ չեմ միջազգային իրաւունքին, ուստի չգիտեմ, թէ ինչպէս կընայեն պետութիւնները Կիտչեների կոչին. ինձ համար պարզ է միայն այն, որ իրենց հայրենիքի համար կռուող մարդկանց անգութ պատժի ենթարկելը ոճրագործութիւն է: Բրիտանական կառավարութիւնը բուրներին կռուող կողմ է ճանաչել, այժմ նա ուզում է հրացանի բերան առնել նրանց իբրև ապստամբների: Եթէ այս բանը հակառակ չէ միջազգային իրաւունքին, ապա աւելի լաւ է վերադառնալ այն հին ժամանակներին, երբ մարդիկ ամենևին գաղափար չունէին իրաւունքի մասին: Այն ժամանակներում ոչ ոք չէր վիճում թէ մարդ իրաւունք չունի մեռնելու իր հայրենիքի համար»:

—«Daily Mail»-ի Բրիւսէլի թղթակիցը վստահելի աղբիւրից հաղորդում է, թէ Բոթան բուէր զօրավարներին հրամայել է այսուհետեւ բաց չթողնել անգլիական գերիներին, այլ պահել նրանց իբրև պատանդ ի դէպս, եթէ Կիտչեներն իրագործի իր կոչի մէջ յիշած սպառնալիքները:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Բեռլինից հեռագրում են, որ օգոստ. 22-ին, կէս օրին, Նոր պալատում արքայական պրինցների, արտաքին գործերի մինիստրի, միւս մինիստրների, գեներալիտետի և պալատականների ներկայութեամբ կայսրն ընդունեց պրինց Ցունին, որը կարդաց չինաց կայսրի մի նամակը, մետաքսեայ դեղին բանուածքի վրայ գրուած։ Այդ Նամակի մէջ չինաց կայսրը գերմանական կայսրին ցաւ է յայտում Կետտելերի սպանութեան առթիւ, «որը,—ասում է կայսրը,—իւր պաշտօնում ջերմագինս պաշտպանում էր երկու երկրների էլ շահերը»: Այնուհետև խօսում է քաւութեան արձանի մասին, որը հրամայուած է կանգնեցնել սպանութեան տեղում, և քաւութեան պատուիրակութիւն ուղարկելու մասին։ Պրինց Ցունին յանձնարարուած է շնորհակալութիւն յայտնել Վիլհէմ կայսրին, որ նպաստեց խաղաղութեանը զօրքեր ուղարկելով «Մեծ բռունցքերին» ճնշելու համար։ Գերմանական կայսրը պատասխանեց. «Ոչ թէ մի ուրախալի, ոչ թէ մի տօնական առիթ, ոչ թէ քաղաքավարութեան հասարակ պարտքի կատարումն է, որ ձերդ կայսերական բարձրութեանը բերել են ինձ մօտ, այլ խորին տխրառիթ, խիստ լուրջ մի անցք.—չինաց կայսրի արքունիքի մօտ պաշտօն ունեցող իմ դեսպան բարոն Կետտելերը սպանուեց չինաց մայրաքաղաքում չինաց կայսերական զինուորի ձեռքով բարձրից տրուած հրամանով: Սա մի անլուր ոճրագործութիւն է՝ հզօրապէս դատապարտելի թէ միջազգային իրաւունքով և թէ բոլոր ազգերի սովորութիւններով։ Այս բոպէիս ձերդ կայսերական բարձրութեան բերանից լսեցի չինաց կայսրի այդ անցքի առթիւ արտայայտած անկեղծ խորին ցաւակցութիւնը և ես սիրով հաւատում եմ, որ ձերդ կայսերական բարձրութեան կայսերական եղբայրն անձամբ հեռու է եղել այս ոճրագործութիւնից և յետագայ բռնութիւններից, բայց դրանով աւելի ծանր յանցանք է ընկնում նրա խորհրդատուների և իւր կառավարութեան վրայ, որոնք թող չմոլորուեն: Նրանց յանցանքը կարող է ներուել ոչ միայն քաւութեան պատուիրակութեամբ, այլ միջազգային իրաւունքի կանոններին և քաղաքակիրթ ազգերի սովորութիւններին համապատասխանող նրանց յետագայ վարմունքով։ Եթէ չինաց կայսրն այսուհետև իւր մեծ երկիրը կըկառավարի խաղաղ հաւատարիմ մնալով այս կանոններին, ապա կըկատարուի և նրա այն յոյսը, թէ անցած տարուայ խռովութիւնների մռայլ հետևանքները կըչնչանան և Չինաստանի ու Գերմանիայի միջև առաջուայ պէս նորից կըսահմանուեն բարեկամական յարաբերութիւններ ի բարօրութիւն երկու ազգի և մարդկային ամբողջ քաղաքակրթութեան։ Անկեղծ և լրջօրէն ցանկանալով, որ այս այսպէս էլ լինի, ողջունում եմ ես ձերդ կայսերական բարձրութեանը»։

— Կիտչեները հեռագրում է Պրետորիայից, օգոստոսի 22-ից. «Ֆրենչը զեկուցանում է, որ թշնամին անցել է հարաւ-արևելեան ուղղութեամբ Տրանսկէի շրջանի վրայով։ Գնդապետ Մոնրո վերահսկում է լեռնային անցքերին: Գնդապետ Սկոբել և Դորան նորոգել են հետապնդումը։ Լոտտեր կանգնած էր Կրադոկի կողմը և գնում է դէպի արևմուտք։ Հարաւում, Աուտգոնին մօտիկ, կանգնած է Ֆերոկ. Նա նոյնպէս գընում է դէպի արևմուտք։ Գնդապետ Գովան հետամուտ է լինում Ձեպերսին, որը օգոստոսի 20-ին շարժուեց դէպի Մոնտեգիւ, բայց կռուի չբռնուեց անգլիացիների հետ, այլ շուռ եկաւ դէպի հիւսիս: Գեներալ Վինդհեմ հետամուտ է լինում Սմիթին Ֆրեզերբուրգի հարաւային կողմը։ Մնացած բուէր զօրախմբերը ցրուած կանգնած են լեռների կիրճերում: Հիւսիսից եկող 60 բուէր օգոստոսի 16-ին անցան Օրանժ գետը Բեթուլիէի մօտ և միացան Լեդի-Գրէյի հարաւային կողմը գտնուած մի փոքրիկ զօրախմբի հետ: Գետի երկու ափերին գտուած մնացած բոլոր տեղերից արտաքսուած են բուէրները և այդ տեղերը գտնւում են խիստ հսկողութեան տակ»։

ԹԵՐ ԵՒ ԴԵՄ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

(Տպւում է գրաքննական կանոնադրութեան 139-րդ յօդուածի հիման վրայ)

Յարգոյ խմբագիր.

Խնդրում եմ ձեր պատուական «Նոր-Դար»-ի մի անկիւնում տեղ տալ իմ պատասխանին «Եալթայից» գրուած թղթակցութեան համար № 82-ի դէմ, որուն չեմ կարող լռել ճշմարտութիւնը երևան հանելով. պ. լրատուն ասում է թէ Ղարասու բազարի Յովհաննէս աւագ քահանայ Սարըյեանն եկել էր Եալթա ոչ թէ տեղւոյս հայ հասարակութեան և պանդուխտ հայ քահանայի միջև ծագած տարաձայնութիւնները քննելու ինչպէս անցեալ համարներում կար հաղորդած «Նոր-Դար»-ի մէջ (որ նրա իմացական և ֆիզիքական ոյժերից վեր է) այլ իւր որդուն Սիմֆերոպօլի հայոց եկեղեցում երկար տարիներից ի վեր ծառայող Յարութիւն սարկաւագ Սարըյեանին՝ Եալթայի հայոց վրայ քահանայ ընտրել և ձեռնադրել տալու համար։ Արդարև հայրս 76 տար. հասակումն է, բայց միթէ քիչեր կան այդ հասակումը մարդիկ որոնք առողջ դատողութիւն ունին իրենց բնական խելքերովը։ Իսկ գալով ձեր վերջի հարցին թէ ինչու հայրս ինձ իրեն օգնական չէ աշխատում քահանայացնել, որպէս զի չերկարի նամակս այսքանս եմ ասում, որ ես ինքս չուզեցի, պատճառը ես 6 հոգու տէր եմ իսկ հայրս երեք հոգու. ուրեմն բոլորս միասին պիտի բաւականայինք ինն անձէ ընտանիք միևնոյն եկամուտով որն հազիւ հայրս առնում է տարեկան 1000 ր. այն ինչ մինչդեռ ես Սիմֆ. ստանում եմ 1500 ր. ուրեմն ինչ բաղդաւորութիւն է դա, միայն սպասակի հանելու պատճառաւ երկու ընտանիք տուժել նեղութեան մէջ, միթէ քիչեր կան միայն քահանայ անունը կրելու համար իրանց նեղութեան մէջ ձգողներ. ահա այդ իսկ պատճառաւ ես խօսք չտուի թէ ժողովրդոց և թէ հօրս, իսկ ինչ կըվերաբերի ձեր հեգնական հարցին որ ասում էք թէ ինձ մանկութիւնիցս ճանաչում են ղարասուեցիք, չարաչար սխալւում էք, վասն զի մենք բնիկ Նոր-Նախիջևանցի ենք և եկած եմ հօրս հետ Ղարասու 21 տ. հասակումս դա մանկութիւն չսուիլ, այժմս իմացաք պ լրատու ինչ պատճառի խօսք չտուածս. վերջացնելով նամակս կըկնում եմ նոյնը բարի վայելում որուն ուզում ուք ընտրեցէք ամեն մարդ ուրախ կլինի յաւ ին միայն չի սխալուիք, ես տեղիցս զրկուած հոգևորականներիցը չեմ, և ոչ էլ տեղի կարօտ կամ քաղցած Աստուած կեանք տայ իմ ժողովրդոց։

Յարութիւն ա. սարկ. Սարըյեանց

Սիմֆերոպօլ, 17 յունիսի

«ՆՈՐ-ԴԱՐ»Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Սալիան, պ. բժ. Արամեանին — ըստացել ենք ձեր արդար ցասումով գրած նամակը Սեանի Տիրամօր պատկերի առթիւ, բայց չհրատարակեցինք, որովհետև պատկերը յետ է բերուել։

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մամուլի տակից դուրս եկաւ
ՄԻՐԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՀԻՆ ՈՒԽՏԻ
յարմարեցրած աքքունի դպրոցների համար
Գինն 30 կոպ.
Դիմել կարելի է՝ Тифлисъ, свящ С. Саакянцъ կամ Тифлисъ, Центральная книжная торговля.
Սահ. քահ. Սահակեանց
(708) 5—1

ՄԻ ՑԵՆԶԱՒՈՐ ՈՒՍՈՒՑԻՉ
որ ուսում է ստացել Ներսիսեան հոգևոր դպրանոցում, ուսուցչական պաշտօն է որոնում։ Կարող է և խմբագետութեան պաշտօն վարել։ Դիմել՝—Въ г. Гори, оптовой складъ Николай Окропиридзе.
(0) 3—2

ԿԱՊՍԻՒԼՆԵՐ ՄԱՏԻԿՈՅԻ
[Capsules au Matico]
ԳՐԻՄՕ ԵՒ ԸՆԿ. ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐԻ
Թոյլ է տրուած Ռուսիայում։



Աջողութեամբ գործ է ածւում հոնորէի բժշկութեան ժամանակ, երբէք չյոգնեցնելով ստամոքսը, ինչպէս այդ լինում է, երբ գործ է ածւում Կոպայի բալզամը հեղուկ ձևով։
Парижъ, 8, Rue Vivienne և գլխաւոր դեղատներում։
(M.) № 7728 23 – 14

Лучшее для зубовъ.
ОДОЛЬ
Цѣна 1 Р. 50 К.

Շատ լաւ թարմացնող
Պահպանում է ատամները փչանալուց։
Աշխարհիս մէջ ամենա տարածուած ջուրը՝ բերանը ողողելու համար։
Անկասկած, աշխարհիս մէջ ցարդ գոյութիւն ունեցող կոսմետիքական միջոցներից սա ամենալաւն է բերանի համար։
(M) № 441 14—4

ԳՐԻԳՈՐԻՍ ՔԱՀԱՆԱՅ ԵՐԶՆԿԵԱՆՑԻ
աշխատութիւնները վաճառւում են իւր մօտ հետևեալ գներով՝

Պատմութիւն Մանկավարժութեան	1 ր. —
Թուաբանական խնդիրներ, Ա. մասն (շուտով կըլինի VII տպագր.)	30 կ.
,, ,, Բ. ,, ,,	35 կ.
Բնախօսութիւն Ֆօսթէրի	30 կ.
Դասաւանդման խորհուրդներ	20 կ.

(709) 2—1

ԲՐՈԿԱՐ ԵՒ ԸՆԿ.
ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ԵՆ
ՊԱՐՖԻՄԵՐԻԱ
„ՋՐԱՅԻՆ ՇՈՒՇԱՆ"
Օ-դը-կոլոն—Սապոն—Օծանելիք—Պուդրա
10—2
(M.) № 95204

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԻ ԹՈՅԼՏՈՒԹԵԱՄԲ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
(Баку Пречещная, домъ Теръ-Ованесова)
Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական առևտրական կրթութիւն և պատրաստել հմուտ հաշուապահներ։ Աւարտողներն ստանում են ատտեստատներ. Կուրսերում աւանդւում են՝ 1) առևտրական թուաբանութիւն և թուաբանութիւն համրիչի վրայ. 2) հաշուապահութիւն՝ արդիւնաբերական-գործարանական, առևտրական և բանկային 3) առևտրական թղթակցութիւն. 4) առևտրական տնտեսագիտութիւն. 5) առևտրական մուրհակային օրէնքներ. 6) գեղագրութիւն և արագագրութիւն (ուղղագրումն ձեռագրի)։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից ամեն օր՝ կուրսերում և «Եղբ. Ծովիանեան և Ընկ.» Բագուայ բաժանմունքում։ Կուրսերի կանոնադրութիւնը уставъ, մանրամասն ծրագիրը և տրւում են և ուղարկւում են ձրիաբար։ Օտարաքաղաքացիները դիմում են учредителю коммерческихъ курсовъ А И. Теръ Каспарову, Баку.
(678) 25—10



ՁՐԻ ԺԱՄԱՑՈՅՑ!!
Ով ուզում է բոլորովին ձրիաբար ձեռք բերել ամերիկեան բարձր որակի իսկական ոսկուց շինուած՝ տղամարդկանց կամ կանանց ծոցի ժամացոյց, որ ոչնչով չի զանազանւում իսկական ոսկեայ ժամացոյցից, թող նա ուղարկի ՄԻ ՌՈՒԲԼԻ, և նրան կուղարկուի ժամացոյցը մնացած 11 ր. վերադիր վճարով. բայց դրանից՝ նրան կուղարկուին 12 կուպոն՝ հատը 1 ր.։ Այդ կուպոնները հեշտութեամբ կարելի է տարածել ծանօթների շրջանում և այդպիսով յետ ստանալ ժամացոյցի վրայ ծախսած փողը։ Իսկ կուպոն գնողը և միևնոյն կուպոնը մեր պահեստն ուղարկողն ստանում է 12 ր. ժամացոյցը միայն 11 ր. վճարելով և ընդմին 12 կուպոն՝ հատը 1 րուբլանոց՝ նորից տարածելու համար։ Նոյն այս կերպով կարելի է ձեռք բերել նաև «Ժորժ Ֆաբեր Ժակօ և Ընկ.» ամենալաւ գործարանի արծաթեայ խուփաւոր ժամացոյց 15 ր. արժէքով։ Նամակներն ուղղել հետևեալ հասցէով—Роману Любеткину, складъ женевскихъ часовъ въ Варшавѣ, Королевская, № 47.
(M.) 106520 3—3

SANTAL MIDY

ՊԱՐԻԶԻ ԴԵՂԱԳՈՐԾԻ
ՍԱՆՏԱԼ ՄԻԴԻ
ԹՈՅԼ Է ՏՐՈՒԱԾ ՌՈՒՍԻԱՅՈՒՄ
Այս կապսիւլների մէջ պարունակուած զուտ սանտալի էսսենցիան բժիշկները խորհուրդ են տալիս գործածել հոնորէի (գաղտնի հիւանդութիւնների) դէմ կապայ-բալզամի և կուբեբայի դէմ։ Սա ներգործում է աւելի արագ, չի յոգնեցնում ստամոքսը, ոչ մի հոտ չի պատճառում և ոչնչացնում է փսխումն ու կոլիկը Կեղծիքներից խուսափելու համար պահանջեցէք, որ իւրաքանչիւր կապսիւլի վրայ լինի սև տառերով դրոշմուած կնիքը։
Պահեստը Ռուսիայի գլխաւոր դեղատներում։
(M.) № 200369 60—35

ՇԵՐԻՆԳԻ ՊԵՊՍԻՆԵԱՆ ԷՍՍԵՆՑԻԱ
պատրաստւում է գաղտնի խորհրդական պրոֆեսոր դր. Օ. Լիբրէյխի ռեցեպտով
[illegible] Է
կերակրի և խմիչքների գործածութեան մէջ [illegible]
[illegible]
ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ԿԱՆԱՆՑ ԵՒ ՕՐԻՈՐԴՆԵՐԻՆ,
[illegible]
ԱՄՐԱՊՆԴՈՒՄ Է ՍՏԱՄՈՔԸ
SCHERING'S GRÜNE APOTHEKE Berlin N. Chausseestrasse 19. / Վաճառւում է Ռուսիայի [illegible]
(M.) 76313 12—6

Доз. цензурою Тифлисъ, 1901 августа 24-го дня Տպարան Ա. Ի. Պետրովի Типографія А. И. Петрова, Голов. пр., № 12 Телефонъ